

Առօրու ՆԿԿՈՂՈՍՅԱՆ

ԷԶՈՐԵՐԻԿ ԶՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Պատմության ընթացքում ռազմաթիվ փորձեր են ձեռնարկվել համաշխարհային կրոնահամաստասիրական ունիվերսալ ուսմունք ստեղծելու ուղղությամբ: Առայսօր ռուսացից ամենահաջողվածն է համարվում «Էզոթերիկ քրիստոնեության» ուսմունքը, որը համաշխարհային ճանաչում և տասնյակ եազարավոր հետևորդներ ունի ռազմաթիվ երկրներում:

Քյերին է հայտնի, սասարն, որ այդ ուսմունքը ձևավորվել և համակարգվել է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Շիրակում: Արտաոց է, ըայց փաստ, որ եետամնաց Ուսական Կայսրության այդ ծայրամասային զավաոն է տասնյակ տարիներ շարունակ հանդիսացել նորաստեղծ ուսմունքի համաշխարհային կենտրոնը, և դս շնորհիվ ուսմունքի հիմնադիր, ալեքսանդրապոլցի Գևորգ Գյուրջիևի՝ այդ մեծանուն իմաստասերի գործունեության:

Յավոք, առայսօր այդ նշանակալից իրողությունը չի արժանացել համապատասխան գնահատման, շարունակում է մնալ չարժեքավորված, չըմրոնված, կարոտ է լրջմիտ և համակարգված գիտական ուսումնասիրության: Լեղ ձեռնարկած փորձը այդ ռացը լրացնելուն նպատակամղված առաջին քայլն է:

Էզոթերիկ քրիստոնեության Շիրակի կենտրոնի պատմության մեջ հատկորեն առանձնանում են որակական հրկու փուլեր: Դրանցից առաջինը ուսմունքի ձևավորման փուլն է, որը ներառում էր զանազան կրոնաիմաստասիրակտն համակարգերի ուսումնասիրումը և վերլուծությունը, դրանց քննադատական համադրումը, նոր ուսմունքի տեսական հիմնադրույթների ձևավորումը և համակարգումը, նրա տարածման մեթոդսարանության մշակումը և կապված է Գ. Գյուրջիևի, Ս. Պողոսյանի և Դ. Գյուրջիևի անունների հետ:

Երկրորդ փուլը ուսմունքի կազմակերպչական-իրավական կայացման փուլն է: Այն ժամանակագրորեն ներառում է 1917-18թ.թ. և իրենից ներկայացնում է գործնական միջոցառումների մի ամբողջ շարք, որը նպատակամղված էր ուսմունքի եամակարգող կենտրոնի ստեղծմանը, սեիական կրթական և գիտահետազոտական համակարգի ծավալմանը, երատարակչական և քարոզչական գործունեության իրագործմանը:

Արդեն 1890-95թ.թ. Գ. Գյուրջիևը, ծանոթանալով քրիստոնեության առաքելական, ուղղափառ և ասորական վարդապետություններին, ձեռնամուխ է լինում կրոնական իմաստասիրությամբ հետաքրքրվող մի խումր ալեքսանդրապոլցիների հետ «Ճշմարտություն փնտրողների միություն» կոչվող խմբակի տեղծմանը: Ակզոնական շրջանում Ալեքսանդրապոլում, ապա և Կարսում, խմբակի անդամները սկսում են ձևավորել այն տեսական հիմնադրույթները, որոնց հեմքի վրա էլ հեաազայում Գյուրջիևը ստեղծում է «Էզոթերիկ քրիստոնեության» ուսմունքը: Դրանք ռանավեհերի, դասախոսությունների, ռուսն քննարկումների, ուսումնաոության և հետազոտության տարիներ էին: Շուտով «Ճշմարտություն փնտրողների» խմբակներ են ստեղծվում նաև Աարիղամիշում, Իգդիրում և Թիֆլիսում: Դարյուրավոր մարդիկ էին արդեն ներգրավվել այդ շարժման մեջ: Նրանց մեջ առանձնանում էին Գյուրջիևի ամենատերիմ զինակիցները՝ Ա. Պողոպանը, Գ. Ղալումյանը և ելրայրը՝ Դ. Գյուրջիևը:

1899թ. Գյուրջիևը մեկնում է երկարատև մի շրջագայության ռեաի Արևելք, քանզի իրեն զգացնել էր աալիս արևելյան իմաստասիրության ոլորտում ունեցած գիտելիքների սղությունը: Շիրակի կենտրոնի գործունեությունը թնավ էլ չըմդիատվեց Ուսուցչի թացակայության պատճառով: Գյուրջիևը պարրերական նամակագրական կապ էր պահպանում Կենտրոնի անդամների հետ, տեսական և մեթոդական օգնություն էր ցուցաբերում նրանց: Կենտրոնը քարոզչական և կրթական լայն գործունեություն էր ծավալել տեղում: Էզոթերիկ (կորուպա) քրիստոնեության ուսմունքը, որն արդեն 1912-18թ.թ. վերածվել էր համաշխարհային ճանաչում ունեցող շարժման, իր ռարծրակեաին Շիրակում հասավ 1917-18թ.թ., երր հայրենիք վերադարծուվ Գյուրջիևը: Նա Ալեքսանդրապոլ ժամանից համաշխարհային թեոսոֆիայի, սես այլ մեծության՝ Պ. Դ. Ուուպենսկու հետ, նպասակ հետապնդելով վերջապես իրագործել իր վաղեմի երազանքը՝ Շիրակում ստեղծել «Մարդու ներդաշնակ զարգացման» Դամաշխարհային ինստիտուտ, որը համակարգող կիանդիսանար աշխարհով մեկ սիոված ուսմունքի հետևորդների համար:

Չմայած աղետալի ժամանակաշրջանին, չնայս քաղաքակուսն, տնաեսական և ընկերային քաոսին՝ ահեելի լծվարություններ հաղթահարելու և վիթխարի կամքի շնորհիվ Գյուրջիևին և Ուսայթնսկուն հաջողվում է կենսագործել Ինստիտուտի ստեղծման և գործավարման ծրագիրը 1917թ. եունիսից միջև 1918թ. մարտ: Սակայան Ալեքսանդրապոլում գործող Ինստիտուտը շուտով իրենից անկախ պատմաոներով ստիպված եղավ դադարեցնել իր գործունեությունը. 1918թ. վերջերին Գյուրջիևը և Ուսպենսկին եետացան Դայաստանից: Ինստիտուտը տեղափոխվեց Թիֆլիս:

Պատմությունը չի սիրում կաղապարներ և առասպելներ: «Մարդու ներդաշնակ զարգացման» Ինստիտուտի լինելիության, էզոթերիկ քրիստոնեության ուսմունքի կենտրոնի առկայության փաստի

շնորհիվ, իրրև գերեցիկ առասպել, կարելի է մի կողմ դնել 20-րդ դարասկզբի Ալեքսանդրապոլի՝ լուկարիեոստների և առևարի քաղաք լինելու եանգամանքը և մոռացության գրկից իրկելով նման վիթխարի արժեքները անաչառ ուսումնասիրությունների շնորհիվ բացահայտել Շիրակի մեծ ներդրումը կամաշխարհային իմաստասիրության գլանարանը:

РЕЗЮМЕ

А. НИКОГОСЯН

Учение эзотерического христианства возникло в конце 19-го века в Шираке. Благодаря деятельности основателя этого учения, уроженца Александрополя Г.И. Гурджиева, именно Ширак стал мировым центром учения вплоть до 1918г. В истории Ширакского центра эзотерического христианства выделяются два качественных периода.

Первый - период теоретического формирования учения (1890-99г.г.). Содержанием этого периода является познавательная-теоретическая деятельность по формированию основ этого учения, по его систематизации и разработке методологии распространения. В Александрополе, Карсе, Сарикамыше, Игдире и Тифлисе возникают кружки последователей учения под общим названием "Общество искателей истины".

Второй - период организационного оформления Ширакского центра (1917-18г.г.). Был создан всемирный координационный центр учения в лице "Института гармонического развития человека", в Александрополе была сформирована собственная система образования и научных исследований, развернута издательская и пропагандистская деятельность.

К сожалению, до сих пор у нас отсутствует системный научный подход к изучению деятельности Ширакского центра эзотерического христианства, по достоинству не оценен тот огромный вклад, который внес этот центр в сокровищницу мировой философии.